

ե. զամազանվում Գեորգի Հերման և Դորոթեան Հոմերի պիսակամից. Ասիլիսի վահանն ու Շիրերի Զանգակի եզրը. համբերեան արձագանգներ Շիրերի քանադոնքիսն-նետում. Վիրգիլիոսի Տրոփայայի կործանումը «անուամ-քանեալ դիրազորովորյուն ե» (Գեթե) :

Քերսիսի օրինակով կարելի է ցոյց տալ, թէ Հոմերի մէջ ամբողջապէս արմատացած մի չիլիք՝ ինչպէս ճիւղաւորվում է զանազան կողմերում. Քերսիսիս - դրուագից հենց և եզրակացնում էն-պիցը իւր Լաոկոոնի գլխաւոր խնդիրը լուսաբանելու, թէ ինչ սահմանով է բաժանած քանաստեղծութիւնը նկարչու-րանից. ինչով է զանազանվում Հերդերի կարծիքը հոմե-րեան Քերսիսի մասին Լեսսինգի կարծիքից. Քերսիսը ծիծա-ղիկ է ինքն իւր ինքնան, թէ ծիծաղելի է դառնում Ողի-սիսի խայտառակելովը և իւր վարմունքովն այդպիսի անարդարութիւնից յետոյ (ազգեղ Հելլենոստի վերայ չեն ծիծաղում, երբ որ նա խոհականութեամբ է խոսում). Հոմերոսի Քերսիսի համամասնութիւնն Եհսպիտի իրար կերպի հետ։—

Դառնանք կրկին ծանրաբեռնութեան խնդ-րին Բիսյն Հոմերոսի բազմութիւն բնաբանների անսպասութիւնից այս քանի մի յիշատակածնե-րը մեզ պէտք է հասկացնէին, թէ գերմանացի աշակերտները արդարեւ այնքան շատ բան են ուսանում, որ մեր ուսումնարանների համար երազել անգամ կարելի չէ։ Բայց այնքանի վե-րայ աւելացրեցէք նաեւ միւս հեղինակութիւննե-րը յունաց, լատինացւոց, նոր ազգերի և մայրե-նի գրականութիւնից, և բնաբանների ծովը ով-կեան կը դառնայ, Իբրեւ է, այս բոլորը ամենայն աշակերտ չպէտք է գրէ, այլ բնաբանների մի խումբ բաժանվում է աշակերտների մէջ, իւրա-քանչիւրին զատ աշխատանք տալով, բայց սըը-բազրութեան ժամանակ ամէնքն էլ գործի մէջ մասնակցում են, որ ապացոյց է, թէ ամէնքն էլ արդէն պատրաստ են՝ ամէն մի բնաբանի համե-մատ՝ շարագրութիւն գրելու, և թէ ուրեմն ա-մէնքն էլ լաւ ուսումնասիրել են Հոմերոսի վե-րայտանութիւնները, մասամբ յունարենի դասե-րում, մասամբ շարագրութեան դասերում։ Իսկ մի գիւրջ այսպէս ուսումնասիրել կարողանալը՝ ոչ ապաքէն մի այնպիսի հարստութիւն է աշա-կերտի ձեռքում, որ մեզ համար անհասանելի բան է թուում. նա սովորում է զիւր կարգաւոր առաւել, որ մեր ուսումնարաններում բոլորովին անյայտ բան է։ Որ դասարանից սը այնպիսի ա-շակերտը դուրս գայ՝ հետը տանում է ինքնակը-րորեան շնորհի, որից որ դուրի է հայոց աշակեր-տը. իսկ եթէ համալսարան մտնի, ինքնուրոյն կերպով աշխատող ուսանող է դառնում, և ճըգ-նում է շուտ վերջացնել իւր ուսանողութիւնը, որպէս զի, բանի որ երկատարգման ոյժ ունի, շատաւ մասնաւորապէս զինուած մանեղ կեանքի

մէջ—ձեռներեց կամքով և նախաձեռնող հոգւով։ Արդ եթէ գերմանական ուսումնարանը գեռ միայն մի ուսմունքի համար այսքան լուրջ աշխատեցնում է իւր աշակերտին, և այնու ա-մենայնիւ նորա ուղեղի յոգնութիւնը մերժելով մերժում է, հապա ինչ յոգնութիւն պէտք է զգայ մեր աշակերտը, որ Խորենացուց ընդ ա-մէնը երկու և կէս բնաբան է քաղում իւր շա-րագրութիւնների համար, իսկ Պուշկինի, Էլլէ-րի կամ Էքսպիլի անունը՝ ուսուց լեզուի դա-սերից դուրս էլ չի լուծւում։ Հապա ուրեմն մենք իրաւունք ունէինք ասելու, թէ մեր ուսումնա-րաններում ծայրայեղութեան և չափազանցու-թեան միւս կողմն է իշխում, թէ մեր ցաւը ու-ղեղի անգարծարիւնն է և պարագրիւնը։ Իսկ այս բանի դարմանն այն կը լինի, եթէ մեր ուսուցիչ-ները ոչ միայն ձայն տան մանկավարժական ժո-գով ներում և ձայներ գումարեն վճիռներ կայաց-նելու համար, այլ և վոքը ինչ յարգեն մանկա-վարժութեան արուեստը, որպէս զի իրանց Քիչ աւանդելիքը Դատ տարիներով ձգձգելու ախար թողնեն և գումարուած տարիքների համեմատ մտաւոր սնունդ մատակարարելու վարժուին։

Ս. Մ.



ՆՈՐ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Դեռ սրանից շատ առաջ Սենեկան գանգա-տում էր, որ մենք ոչ թէ կեանքի, այլ գարոցի համար ենք ուսանում, Սենեկայից մինչև այժմ դարի են անցել, մանկավարժութիւնը ահագին յառաջագիմութիւն է արել, այնու ամենայնիւ նոյն իսկ այժմ, եթէ մէկը լաւ ուսումնասիրէ մեր գարոցական ամբողջ գործը և ուսումնարանական բոլոր հաստատութեանց ծրագրերը՝ Սենեկայի հետ միասին կգոչէ ցաւը սրտի, որ մենք ուսանում ենք ոչ թէ կեանքի, այլ գարոցի համար։

Մինչև այժմ լոյս տեսած այն բոլոր գրքե-րի և յօդուածների վերայ՝ որոնք պատարակում են գարոցական կրթութեան արդի դրութիւնը, աւելացաւ մի նոր գիրք ևս, որ վերջին գիտումն է ամբողջ գարոցական գործը յեղաշրջել։

Դեմուլենի այս գիրքը լոյս է տեսել Փարի-զում և կրում է «նոր կրթութիւն» (Education nou-velle) անունը, Այս գիրքը գեռ լոյս չտեսած յա-ռաջ բերեց մի մեծ բանակիւ, որ ըստ ինքեան նշանակելի երևոյթ է. La science sociale անուա-

նի լրագրի խմբագիր Գեմուլենը վաղուց արգեն յայտնի էր ընկերաբանների աշխարհում իւր գիտնական մեծ աշխատութիւններով։ Բայց աւելի մեծ հռչակ ստացաւ նա իւր «Ինչով են նշանաւոր Անգլո-Սակերը» անուն գրքով որ հրատարակուեցաւ անցեալ տարի։ Այդ գիրքը մեծ ընդունելութիւն գտաւ և կարճ ժամանակուայ մէջ 15 անգամ հրատարակուեց։ Թարգմանուեց նաև Անգլիերէն, Գերմաներէն, Իսպաներէն, Լեհերէն, մինչև անգամ Արաբերէն։ Ռուսերէն լոյս տեսաւ բացառութիւններով հանդերձ Կ. Պ. Պոդգոնոսեւի աշխատութեամբ։ Գեմուլենի «նոր կրթութիւնը» ահա այդ գրքի շարունակութիւնն է կազմում։

Պրանսիայի ժամանակակից դպրոցների պահպանութիւնները ցոյց տալով, Գեմուլեն երևան է համում նորա այժման միջնակարգ կրթութեան խիստ ցաւայի վիճակը։ Լսարաններն աւելի հակառողջապահական զօրանոցներ են ներկայացնում քան փոքրիկ տեղում բազմութիւն աշակերտներ են զետեղուած։ Մեծ քաղաքների այն կրթիչ հաստատութիւնները որոնց մէջ գիշերօթիկ սաներ են ապրում։ Փրանսիայի հասարակական կեանքի հիւանդ մասն են ներկայացնում։ Ծրագիրները որոնց մէջ մեծ տեղ են բռնում լատիներէն և յունարէն լեզուները, անպէտք են։ Ժամանակակից կենդանի լեզուներն այնքան թույլ և վատ են աւանգուում որ լաւ աշակերտն անգամ ուսումը վերջացնելուց յետոյ եթէ ուղևորուի Գերմանիա կամ Անգլիա անկարող է փոքր ի շատեւ ազատ խօսել։ Այդ բոլորը հիմնական բարենորոգութիւններ է պահանջում ասում է Գեմուլենը։

Ժամանակակից դպրոցը մանաւանդ Պրանսիականը խիստ կերպով քննադատելուց յետոյ հեղինակը տալիս է իր կողման «նոր դպրոցի ծրագիրը»։ Այդ նոր դպրոցը իւր բոլոր էութեամբ պէտք է նմանի այժմ գոյութիւն ունեցող Անգլիական երկու օրինակելի պրոցական հաստատութեանց որոնք կրում են Արլաադօլմսկի և Բիգէլսկի անունները։ Նոր դպրոցը ամբողջ ժամանակ իւր մէջ պէտք է պահէ խնամէ 11—17 տարեկան աշակերտներ միայն ամառնային արձակուրդներին իրաւունք տալով նրանց գնալու իրենց ծնոցների մօտ։ Դպրոցը պիտի լինէ քաղաքից դուրս գետի լճի կամ ծովի ափին։ Մի կալուածքի մէջ որ պիտի ունենայ 25 կամ աւելի օրավար հող անտառ և դաշտ անասունների համար բակ և ագարակ։ Ուսուցիչները պէտք է ապրեն նոյն հաստատութեան մէջ և պէտք է ծաշեն աշակերտների հետ միասին միևնոյն սեզանից։ Եթէ ուսուցիչը ամառնացած է, նորա կրնն ևս պէտք է ստանայ դպրոցում մի օրէնէ պարապմունք։

Ամբողջ օրուայ ընթացքում ուսուցիչը նուիրուած պէտք է լինի դպրոցին։ Նա սաների հետ

պիտի ապրի ոչ թէ իրր գիտող կամ հրամայող այլ բառի բուն նշանակութեամբը դաստիարակ։ Նա պէտք է մասնակցէ նոցա բոլոր պարապմունքներին ինչպէս ուսումնական զբաղումներին նոյնպէս և ֆիզիքական խաղերին։ Ըողալուծ և այլն։ Նա պէտք է սովորեցնէ աշակերտին զբաղուել նաև այդ ֆիզիքական զասերով այնպէս ինչպէս միւս սովորական ուսումնական առարկաներով։

Ինչ վերաբերում է ուսումնական պարապմունքներին, «նոր դպրոցի» գլխաւոր մանկավարժական սկզբունքը նրանում է որ աշակերտները համարեա ամբողջ աշխատանքը կատարեն գոտի ժամանակ ուսուցչի ներկայութեամբ և մասնակցութեամբ։

Որովհետև այդպիսի գիշերօթիկ կրթիչ հաստատութիւնները զօրանոցի բնաւորութիւն չպէտք է ստանան այդ պատճառով հիմնադիրները անհրաժեշտ են համարում որ աշակերտները դուրս չլինին նաև կանանց հասարակութիւնից։ Վերոյիշեալ դպրոցներում բացի տեսչի և մի քանի ուսուցիչների կանանցից պէտք է լինին նաև վարժուհիներ։ Այսպիսով մատաղ սերունդը ուսումը վերջացնելուց յետոյ երբ կեանքի մէջ մտնի սովոր կլինի նաև կանանց հասարակութեան։

Նոր դպրոցներում պարապմունքները հետեւեալ կերպով են դասաւորուած։

Առաւօտեան ժամի 7-ին աշակերտները վեր են կենում։ 7 ժ. 20 ր. թեթեւ զրօսանք են կատարում։ մինչև որ քնից թուլացած մարմինը թարմ օդի ազդեցութեան տակ կազդուրուի։ 7 ժ. 30 րոպ. նախաճաշում են։ Սկսած 8 ժ. 30 րոպ. մինչև 10 ժ. 30 րոպ. տեղի է ունենում 2 դաս։ Ապա հանգիստ (ամառը լողում են)։ Ժամի 1-ին ճաշ։ Ժամի 2-ից մինչև 5 ժ. 30 րոպ. պարապում են հիւսնութեամբ։ Նկարչութեամբ։ զանազան խաղերով։ պարտիզում և ագարակում այլևայլ աշխատանքներով և այլն։ Ժամի 5 1/2-ին ընթրում են։ Ժամի 6-7 հիգիենոգ դաս (ամառը զանազան ֆիզիքական վարժութիւններ։ խաղեր)։ Ժամի 7-7 ժ. 30 րոպ. երգեցողութիւն։ 7 ժ. 30 րոպ. մինչև 8 ժ. 30 ր. երաժշտութիւն։ զրուցատրութիւն։ ընթերցանութիւն։ կաւից ամաններ շինել և այլն (ամառը դաս)։ Ժամի 8 1/2 մի թեթեւ ընթերք։ աղօթք և ապա գնում են քնելու։

Գեմուլենի՝ ըստ անգլիական օրինակելի դպրոցների կազմած այս գիշերօթիկ դպրոցը պէտք է գտնուի ոչ Փարիզում և ոչ էլ մի որևէ քաղաքում։ այլ գիւղում Verneuil-ի մօտ։ Նորմանդիայում։ Նա չպիտի լինի սովորական հակառողջապահիկ զօրանոց։ այլ մի սովորական բնակարան անտառների մարգագետինների և դաշտերի մէջ։ Նրբիւսները բոցառապէս չպէտք է կապուած լինին դասագրքերի հետ։ Նոքա պէտք է ապրեն բնութեան

գրկում Գրադիտու թիւն սովորելու հետ միասին՝ նորա պէտք է սովորեն նաև երկիր մշակելու, ծառեր լնամելու արհեստը: Որովհետև կեանքի համար բնական չէ սովորել Կիկերոն, Դեմոսթեն կամ Վերգիլիո կարգալ, այլ անհրաժեշտ է նաև զարգացնել մարմինը և ամրացնել, պնդացնել ջղերը, վերջապէս այդ «նոր դպրոցի» կրթութեան մէջ ֆիզիքականը նշանաւոր տեղ պէտք է բռնի:

Թարգմ. Գ. Ղ.

ՀԱՅԿԱԿԱՆՈՒՄ*

ԺԵ

Ստեփանոս Լեհացու և նրա երկասիրութեանց մասին բաւական տեղեկութիւններ տալիս է իւր ժամանակակից Առաքել Դաւիթեանը (Էջ 407—409, Վաղարշ. 1896).

Զինի սոցին պատմեցուք զայլոյ ուսման զմարտնեցալ զառն զարգիւնաւորութիւնն, որոյ անունն Սեփանոս յորջորջիւր: Որ էր ինքն ի մայրաքաղաքէն Խոփայ և յազգէն Հայոց, յազատ և ի փարթամ տանէ, բարեպաշտ ծնողաց զաւակ, որ ի տիս տղայութեան իւրոյ վարժեցաւ ի դպրատունս Իւովացոց՝ գրով և լեզուան Լատինացոց և ուսաւ զարուեստ քերականութեան և զարտաքին գիրս փիլիսոփայից: Եւ ի ժամանակին յորում՝ Նիկիո կայսկոպոսն Իւովոյ նեղէր և վտանգէր զհայազուն ժողովուրդն որ յԻւով էին, ծնողք Ստեփանոսիս՝ վասն բարեպաշտութեան և վասն ուղղափառութեան՝ հանեալ զոս յԽոփայ, առաքեցին ի սուրբ Աթոռն Էջմիածին ի ժամանակս Փիլիպպոս Աթոռնիկոսին:

Արեմ Ստեփանոսի Էջմիածին գալը 1636 թուի յունուարի 13-ից յետոյ է: Այս Փիլիպպոսի կաթողիկոսանալու թուականն է: Բայց այս թուից որչափ քանի տարիներ յետոյ է տեղի ունեցել նրա Էջմիածին ժամանելը, այդ մենք չգիտենք: Դաւրիժեցին շարունակում է.

«Եւ յորժամ եհաս Ստեփանոսս Էջմիածին, ուսաւ զլեզու և զգիր Հայոց և ի բերան էառ զսարմոս և զշարական և զայլ եկեղեցական

ուսմունս: Այնուհետև սկսաւ ընթեռնուլ զԱստուածաշունչ գիրս և զերկոտասան վարդապետաց և փիլիսոփայից, եւ վասն զի յառաջմէ գիտէր զլեզու և զգիրս Լատինացոց, յետոյ ուսաւ և զմերս և զերկոսեանն առ միմեանս համեմատելով խոկայր ի նոյնն և մտաւարժէր, վասն որոյ առաւելաւ քան զայլ ընկերս իւր, Այլ և էր մտքն սուր և ծնունդական, առնող և պահող և միշտ ընթերցող և վարուքն մաքրակենցալ և պարկեշտ: Զորոյ զուսումն և զմաքրութիւն վարուց տեսանելով ամենայն վարդապետաց՝ վկայեցին առաջի Փիլիպպոսի կաթողիկոսին, Այլ և ինքեան իսկ տեսան Փիլիպպոսի տեսանելով զարժանաւորութիւն նորա, կոչեաց յես զերազրական ի փառս. զի յետ օրհնելոյ զնա կուսակրօն քահանայ՝ ետ նմա իշխանութիւն վարդապետական, ասելով. Բարեկամ ի վեր մատի՛ր, ըստ տէրունական առակին:

Ստեփանոսի վարդապետանալը այս հաշուով Փիլիպպոսի մահուան թուականից — 1656 մարտի 25 — առաջ է և թերեւս տարին երով առաջ: Թամեայն դէպս 1656 թուին Ստեփանոս վարդապետը եթէ լինէր առնուազն 26 ամաց, նրա ծնունդը կընկնի 1630 թուին, բայց ամենայն «հաւանականութեամբ այս վերջին թուից զոնէ մի քանի տարի առաջ է ծնուած Ստեփանոսը: Դաւրիժեցին շարունակում է.

«Եւ ինքն Ստեփանոս վարդապետ օր ըստ օրէ վարժէր և կրթէր զանձն ուսմամբ և պարկեշտ վարութիւն վասն որոյ ընկալաւ զշնորհքս ի Հոգւոյն սրբոյ և ի նորին պարգևացն թարգմանեաց շքաւ գիրք ի Լատին գրոյ և ի լեզուէ ի Հայ գիր և ի լեզու:

[1.] Որոց մինն է Յոսէպոս Պատմագիրքն, բայց ոչ զբովանդակն, այլ զայն միայն զոր ի վերայ Երուսաղէմ քաղաքին և Հրէից ազգին պատերազմութիւնք յարեան, որ է վեց հատոր:

[2.] Եւ երկրորդ՝ Գիտնէսիոսի Արիստոքազացոյ գիրքն, զի թէպէտ առաջին թարգմանեալն Ստեփանոսի Սիւնեցւոյն գոյր ի մէջ մեր, այն համառօտախօս և զգուշարհասկանալի էր, իսկ սորայս թարգմանեալն այլուի նոյն ինքն է, բայց զիրահասկանալի է, որ ոչինչ մնայ անհաս յընթերցողէն, զի մեկնութիւն յաճախ է և զիրահաս:

[3.] Եւ երրորդ գիրք մի է, որոյ անունն է Գիրք Պատճառաց, այլ և կոչեն զնա Ի վեր քան զընտանս, որ է ինքն աս-

* Shu ukrums 1899 p. համար Բ. եր. 354: